Մաքրավանք

Մաքրավանքը գտնվում է Հրազդան քաղաքի արևմտյան կողմում:
Վանքի գլխավոր կառույցը XIII դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին իրենից ներկայացնում է արևմտյան կողմում երկհարկանի ավանդատներով գմբեթավոր դահլիճի տիպի կառույց: Եկեղեցին շրջապատված է բազմաթիվ խաչքարերով: Հարավային կողմում քառակուսի հատակագծով գավիթը, որի պատերի հիմքերն են մնացել: Վանքի արևելքում զարդաքանդակ խաչքարերով փոքրիկ գերեզմանոցն է: 2018թ. Մաքրավանքում կատարվել են պեղումներ, ինչի արդյունքում մաքրվել է գրեթե ամբողջությամբ հողածածկ գավիթը և երկու եկեղեցիների շրջակայքը: Հայտնաբերվել են 83 տապանաքար, 20 խաչքար, 13 խաչքարի պատվանդան, խաչքարի 62 բեկոր, 20 արձանագրություն, ճարտարապետական տասնյակ բեկորներ, խեցեղեն և մետաղյա անչափ հետաքրքիր բազմաթիվ գտածոներ:
Ըստ ավանդության՝ բռնակալ շահերից մեկը, նվաճելով Մաքրավանքի տարածքը, ցանկանում է եկեղեցին քանդել և նրա քարերով Հրազդան գետի վրա կամուրջ կառուցել: Սակայն ժողովուրդն ապստամբում է, և շահը, ընկրկելով, հրաժարվում է եկեղեցին քանդելու մտքից: Եվ քանի որ եկեղեցու շուրջ համախմբած մարդիկ կարողանում են ստիպել շահին հրաժարվել իր մտքից, Մաքրավանքին տալիս են նաև «Շահ ղուտուրա»՝ շահ կոտորող, շահին հաղթող անվանումը: Իսկ հետագայում, որպես շահին նախատինք, շահ կոտորող անվանումը փոխարինում են «Էշ ղուտուրա»՝ էշ կոտորող անվանումով: